ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԲԱՆԿԵՐԻ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ընդունվել է 29.05.2002*

***Հոդված 1.*** «Բանկերի սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերնագիրը «Բանկերի» բառից հետո լրացնել «եւ վարկային կազմակերպությունների» բառերով:

***Հոդված 2.*** Օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ`

«1. Սույն օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի եւ վարկային կազմակերպությունների (այսուհետ` բանկեր) անվճարունակության եւ սնանկության հասկացություններն ու հատկանիշները, անվճարունակության եւ սնանկության կանխարգելմանն ուղղված միջոցառումների անցկացման կարգն ու պայմանները, ինչպես նաեւ բանկերի սնանկության հետեւանքով նրանց լուծարման, սույն օրենքի 42-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված կարգով գրանցումից չհանված բանկերի լուծարման ընթացակարգը: Սույն օրենքի 42-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված կարգով գրանցումից չհանված բանկերի լուծարային հանձնաժողովների (կառավարիչների) գործունեությունը համապատասխանեցվում է սույն օրենքի պահանջներին:»:

***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ` Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

**22 հունիսի 2002թ.**
**ՀՕ-368**